ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

13 հուլիսի 2012 թվականի N 3

ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-Ի ԹԻՎ 5/2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով Հայաստանի Հանրապետուտության կառավարության 2012 թվականի փետրվարի 2-ին կայացած N4 նիստի արձանագրության քաղվածքով ,

համայնքի ավագանին **որոշեց՝**

Համայնքի ավագնու 2010 թվականի հունիսի 4-ի թիվ 5-2 որոշմամբ հաստատված « Դիմիտրովի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության III բաժնի 17 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«17. Հաստատություն ընդունվում են մինչև վեց տարեկան երեխաները՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում: Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք /խառը/ խմբեր, որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան:»:

Ավագանի՝ ---------- Հ. Մնացականյան
---------- Հ. Եղիազարյան
---------- Լ. Գիվարգիզովա
---------- Ս. Ղևոնդյան
---------- Կ. Բաղալյան
---------- Գ . Միրզոյան

կողմ 6 դեմ 0

Դիմիտրով համայնքի ղեկավար՝ Ա. Իոնանով